10272

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 16 » 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0147-21

Ձեռնարկողը՝ «ԱՆՆԱ ՀԱՆՔ» ՍՊԸ
ք. Երևան, Սիլիկյան թղմ. 10 փ. /33/1

Գործունեությունը՝ Շողակնի տուֆերի երևակումում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Ի. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ 0147-21
թիվ ԲՓ
<16> 08 2021թ.

Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի երևակումում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԱՆՆԱ ՀԱՆՔ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Հայտ/, Ծրագիր
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Ապարան համայնք

Ներածական մաս: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի՝ Շողակի տուֆերի երևակումում երկրաբանական ուսումնասիրությունը դասակարգվում է որպես «գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

«ԱՆՆԱ ՀԱՆՔ» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է 2021-2022թ.թ ժամանակահատվածում Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի երևակման տեղամասում իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ՝ նպատակ ունենալու որոշել օգտակար հանածոյի շերտախմբի հզորությունը և որակական հատկությունները, ինչպես նաև պիտանելիությունը շինարարության մեջ օգտագործելու համար:

Նկարագրական մաս: Ընկերության կողմից տուֆերի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գտնվում է Ապարան համայնքի Շողակն (Նորաշեն) բնակավայրի վարչական սահմաններում /վերջինից 2.5 կմ դեպի հարավ-արևելք/, զբաղեցնում է 0.9 հա ընդհանուր մակերեսով տարածք: Երևակման տարածքը մոտակա խոշորացված Ապարան համայնքի և Երնջաթափ բնակավայրերի հետ կապված է ասֆալտապատ ու գրունտային ճանապարհներով:

Երկրաձևաբանական տեսակետից Շողակնի երևակման երևակման տարածքը հարում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավային լանջերի նախալեռնային գոտուն: Այն իրենից ներկայացնում է մեղմաթեք լանջ, տեղադրված է 1899.5-ից մինչև 1913մ բացարձակ բարձրությունների վրա:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի, մթնոլորտային տեղումների հիմնական մասը ճեղքավորված հրաբխածին-նստվածքային ապարների հաստվածքի միջոցով տեղափոխվում և բեռնաթափվում են Քասախ գետի կիրճում: Դիտարկվող տարածքում սողանքային մարմիններ չեն արձանագրվել:

Գործունեությունն իրականացվելու է համայնքի ղեկավարի կողմից նախնական համաձայնությամբ տրված հողատարածքում, որի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայր: Հետախուզման տեղամասի մակերևույթը հիմնականում քարքարոտ է, տեղ-տեղ ծածկված փոքր հզորության հողաբուսական ծածկով: Երևակման արածքից մոտ 400մ հեռավորությամբ արևելք գտնվում է Նորաշենի պեմզայի շահագործվող բացահանքը, իսկ 530մ հարավ ուղղությամբ արդյունահանված պեմզայի պահեստավորման վայրն է:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքի կենտրոնի աշխարհագրական կորդինատներն են՝ հյուսիսային լայնության-40°26'48'', արևելյան երկայնության-44°29'21'': Շողակնի տեղամասի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացվում են.

1. X=8456538.23, Y=4479217.126
2. X=8456521.91, Y=4479297.68
3. X=8456505.75, Y=4479311.34
4. X=8456476.58, Y=4479323.34
5. X=8456480.40, Y=4479337.77
6. X=8456509.75, Y=4479330.01
7. X=8456592.87, Y=4479439.11
8. X=8456659.10, Y=4479408.04
9. X=8456594.61, Y=4479370.12
10. X=8456554.93, Y=4479337.16
11. X=8456546.39, Y=4479289.66
12. X=8456547.28, Y=4479251.30

Ըստ նախնական դիտարկումների (համաձայն հարևանությամբ գոյութուն ունեցող բացահանքի և մերկացումների տվյալների) հանքերևակման երկրաբանական կտրվածքը վերևից-ներքև ներկայացված է՝

- հողաբուսական շերտով /բաց մոխրագույն կավավազներով և ավազակավերով, որի հզորությունը տեղամասում տատանվում է 0.15-ից 0.30մ/,
- հրաբխային Արթիկի տիպի տուֆերով, որոնք ունեն շերտաձև տեսք և գրեթե հորիզոնական տեղադրում, որը տատանվում է 2.5-ից մինչև 6.5մ սահմաններում:
- պեմզաներով և ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով /ավազակավեր, կավավազներ/, որոնք տուֆերի համար հանդիսանում են հիմնատակող ապարներ:

Տուֆերի հետախուզման հիմնական նպատակը՝ օգտակար հանածոյի հզորության, դրա տարածման ճշգրտումն ու տուֆերի որակական հատկանիշների պարզաբանումն է, ինչպես նաև դրանց պիտանելիությունը որպես շինքար օգտագործելը: Տեղամասում պաշարները հաշվարկվելու են B կարգով, քանի որ հետախուզափորվածքների միջև եղած հեռավորությունը չի գերազանցում 135մ-ը: Ծրագրով նախատեսված երկրաբանահանույթային աշխատանքների մեթոդիկան ներառում է՝ 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմում /0.9 հա տարածքի վրա/, հորատանցքերի մեխանիկական սյունակային հորատում, հետախուզահորերի անցում, նմուշարկում, փորձնական հանույթ և բնական մերկացումների ուսումնասիրություններ:

Երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական հանույթ, որի աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված կազմակերպության կողմից:

Տուֆերի որակական հատկանիշները պարզաբանելու նպատակով /որպես հումք՝ երեսապատման իրերի և շինարարական նյութերի արտադրության համար/, նախատեսվում է հորատանցքերից, փորձնական բացահանքից և բնական մերկացումներից կատարել նմուշարկում:

Ընկերության կողմից հայցվող 0.9հա տուֆերի երևակման տարածքում նախատեսվում է հորատել 3 հորատանցք /8.0մ խորությամբ, 24.0մ ընդհանուր ծավալով/ և անցնել 2 հետախուզահոր /յուրաքանչյուրը՝ 5մ խորությամբ, ընդհանուրը 10գծ.մ ծավալով/:

Հորատումը կիրականացվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 103 մմ նախնական և 93 մմ վերջնական տրամագծով: Հորատհանուկի նվազագույն ելքը յուրաքանչյուր երթում պետք է լինի 80%-ից ոչ պակաս:

Ըստ նախնական տվյալների հորատվող ապարների կարգերը հետևյալն են՝

- ժամանակակից էլյուվիալ-դելյուվիալ առաջացումներ – IV կարգ (0.76մ),
- տուֆեր - VII կարգ (21.4մ),
- կավավազներ, խարամացված տուֆերի բեկորներով - V կարգ (1.84մ):

Հորատանցքերի համար 3 անգամ կկատարվի ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում: Հորատումը կիրականացվի պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված խմբի կողմից:

Յուրաքանչյուր հետախուզահորի մակերեսը կկազմի 2,4մ^2, իսկ աշխատանքների ծավալը՝ 12մ3: Երկու հետախուզահորերի ընդհանուր 24մ^3 ծավալում մակաբացման ապարները կկազմեն՝ 1.68մ^3: Նմուշարկման և փաստագրման աշխատաքնների ավարտից հետո կկատարվի փորվածքների հետլցում 24մ^3 ծավալով:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները, հորատահանուկը, փորձնական բացահանքը և բնական մերկացումները:

Երկրաբանակական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1: 100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները ներառում են.

- փորձնական բացահանքի փաստագրում – 20գծ.մ,
- հորատհանուկի փաստագրում – 24գծ.մ,
- հետախուզահորերի փաստագրում – 10գծ.մ,
- բնական մերկացումների փաստագրում – 125գծ.մ:

Տուֆից բլոկների ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է փորձնական բացահանքի անցում՝ 150մ^3 ծավալով թարմ տուֆերից: Փորձնական հանույթը կկատարվի առանց պայթեցման աշխատանքների:

Տուֆերի ֆիզիկամեխանիկական հատկանիշների, քիմիական հետազոտությունների և պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար վերցվող նմուշները կենթարկվեն քիմիական և ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների, որի համար նախատեսվում է վերցնել 14 նմուշ, այդ թվում՝ 6 հանուկային, 8 ակոսային: Տուֆերի քիմիական կազմի որոշման նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ /1-ը հորատհանուկից, 1-ը՝ ակոսներից/:

Հորատումից ստացված ամբողջ հորատահանուկը ենթարկվում է նմուշարկման: Հորատահանուկը կնմուշարկվի 3.8մ երկարությամբ, որի դեպքում հորատման ամբողջ ծավալը կկազմի 6 նմուշ: Հետախուզահորերից, բնական մերկացումներից և փորձնական բացահանքից նախատեսվում է վերցնել 8 մոնոլիտ նմուշներ /չափ՝ 20x20x20սմ/ որից 1-ը բացահանքից, 5-ը մերկացումներից, 2-ը հետախուզահորերից:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացում վերցված բոլոր նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների «Անալիտիկ» ՓԲ ընկերության լաբորատորիայում:

Նախատեսվում է կատարել նաև պետրոգրաֆիական հետազոտություններ և ուսումնասիրություններ /որի համար պետք է պատրաստվի 3 շլիֆ/, որոնք կկատարվեն ՀՀ ԳԱ երկրաբանական ինստիտուտում:

Հետախուզվող տարածքում ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով (ջրաբեր հորիզոնների առկայությունը և ջրի որակը, պարզելու համար) նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ: Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել՝ տեղամասի

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՓՐՈՍԵՍԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՓՈՐՁԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱՓՈՐՁԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
02543163
ՓՈՐՁԱՓՈՐՁԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

տուֆերի կազմը, ճեղքավորվածությունը, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան, ինչպես նաև տեղանքի գեոդինամիկ պրցեսները:

Անցած լեռնային փորվածքներում հանույթը պետք է ենթարկի ռադիոմետրական չափումների՝ ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզելու նպատակով: Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված կազմակերպության կողմից:

Երկրաբանական ուսումնասիրության մեթոդիկան չի ենթադրում վտանգավոր նյութերի օգտագործում և աղտոտված արտահոսքերի առաջացում, քանի որ հորատումը կատարվելու է հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով՝ առանց հորատման լուծույթների կիրառման:

Աշխատանքների իրականացման համար պահանջվող տեխնիկական ջուրը /որը նախատեսված է հորատման աշխատանքների, մակերևութային փորվածքների և բացահանքի անցման ժամանակ փոշեառաջացման կանխման նպատակով/ կբերվի Շողակն գյուղից ջրի ցիստեռնով՝ ջրցան-լվացող մեքենայով, իսկ անձնակազմի կարիքների համար խմելու ջուրը կբերվի անհատական տափաշշերով: Աշխատողների կենցաղային կեղտաջրերի հեռացման համար կնախատեսվեն հատուկ տարողություններ:

Աշխատանքների իրականացման համար ճանապարհի շինարարություն չի նախատեսվում, քանի որ օգտագործվելու է Նորաշենի հանքավայրի բացահանք տանող ճանապարհը, ինչպես նաև գյուղի բնակիչների կողմից օգտագործվող ճանապարհը: Ժամանակավոր ազդեցություններ կդրսևորվեն մթնոլորտային օդի, հողային ծածկույթի, կենսաբազմազանության տեսակների, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա: Աշխատող ավտոտրանսպորտը և հորատման հաստոցները կարող են դառնալ վնասակար գազերի և փոշու արտանետումների ժամանակավոր աղբյուր: Քիչ քանակով փոշեառաջացում կարող է դիտվել նաև փորձնական հանույթի բացահանքի սահմաններում: Նշված ազդեցությունների կանխարգելման և նվազեցման համար Հայտում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ:

Կիրառվող ավտոտրանսպորտը և սարքավորումները պարտադիր պետք է անցնեն տեխնիկական զննում, որպեսզի ապահովեն աշխատանքի սարքին վիճակը, ինչը թույլ կտա հսկել աղմուկի թույլատրելի մակարդակը և նվազեցնել շրջակա տարածքների համար անհանգստության աղբյուր հանդիսացող թրթռումները և աղմուկի ազդեցությունը:

Հետախուզական փորվածքների, հորատահարթակների կառուցման և փորձնական բացահանքի անցման ժամանակ կարճատև ազդեցություն կդրսևորվի հողային ծածկույթի վրա: Հողի վերին շերտի պահպանության նպատակով հորատահարթակների կառուցման ժամանակ /ընդհանուրբ 120քմ մակերեսում բուսաշերտ առկա է տարածքի 62 տոկոսում/ 22.32 խմ ընդհանուր ծավալով հողաբուսական շերտը նախատեսված է հանել և ժամանակավոր պահեստավորել: Կարճաժամկետ կպահեստավորվի նաև հետախուզահորերի անցման ժամանակ 4.8քմ մակերեսով տարածքից հեռացվող՝ 1.68մ^3 հողաբուսական շերտը և փորձնական բացահանքի անցման ժամանակ 100քմ մակերեսում առաջացող 30մ^3 ծավալով մակաբացման ապարները (ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներ, հողաբուսական շերտ, փշրված տուֆերի բեկորներ): Հետախուզական աշխատանքների ավարտից հետո հողաբուսական շերտը կօգտագործվի խախտված տարածքների վերականգնման նպատակով՝ փռելով այն 0.3մ հզորությամբ խախտված տարածքների վրա, այնուհետև իրականացնել հարթեցման և փխրեցման աշխատանքներ: Ընդհանուր 224.8մ^2 մակերեսում 54.0մ^3 ծավալով բուսաշերտի վերականգնման/ռեկուլտիվացիայի աշխատանքների համար իրականացման ծախսերը հաշվարկվել և գնահատվել են՝ 134.88հազ ՀՀ դրամ:

Երևակման տարածքում, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում Ընկերության կողմից իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական

ազդեցության կանխարգելմանը կամ աշխատանքային միջավայրի մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մթնոլորտային օդ, լեռնատրանսպորտային սարքավորումներ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/, որոնց համար նախատեսված ծախսերը տարեկան կկազմեն 200.0 հազ.դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների կանխարգելման, կամ մեղմացման նպատակով նախատեսված միջոցառումները /ներառյալ՝ երևակման տարածքում աշխատանքային միջավայրի անվտանգության ապահովման և հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումները/ ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են տեղական ինքնակառավարման մարմինները, Արագածոտնի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության նախարարությունները, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլում Շողակն համայնքում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Քննարկման ընթացքում նախնական գնահատման հայտը ներկայացվել է համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում տեղացի բնակիչների ներգրավման և լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման հնարավորությունը:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված աշխատանքները չեն ունենա բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի բաղադրիչների /հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն/ վրա, քանի որ դրանք փոքրածավալ են, կարճատև և ոչ զգալի ազդեցությամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ/ մշտադիտարկումներ և արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

2. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց ժամանակացույցերը:

3. Աշխատանքներն իրականացնելիս պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

4. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների

կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՆՆԱ ՀԱՆՔ» ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի երևակումում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան

Ընդամենը՝ 6 էջ: